



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մարտ 19, 1982

## ԱՌ ՏԻԱՐ ԺԻՐԱՅՐ ՀԱՆԸՆԵԱՆ

Ինչպէս գիտէք 1979 Յուլիս 14ին, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մէջ, Թեմական Խորհուրդի նիստին ներկայացան, ժամանակ մը ըմբոստ մնալէ յետոյ, տասնըրեք ազգայիններ՝ որոնք պաշտօնապէս յայտարարեցին որ որոշած են Ենթարկուիլ Թեմական Կանոնադրութեան, Առաջնորդին եւ Թեմական հշխանութեան, եւ պատրաստակամ են իրենց տրուելիք հրահանգներուն համաձայն կազմակերպել Թորոնթոյի մէջ մեր Թեմի Երկրորդ համայնքը Ս. Խաչ Հայց. Եկեղեցի անունով:

Հակառակ իրենց խոստումին, մինչեւ Թուականս, Թեմական Խորհուրդի կողմէ հաստատուած Եկեղեցւոյ պաշտօնեաները մերժած են անսալ Թեմական հշխանութեան հրահանգներուն, շարունակելով իրենց ըմբոստ ընթացքը, մինչեւ որ 1981 տարուան Թեմական Պատգամաւորական ժողովի որոշումին համաձայն, Թեմական Խորհուրդը պարտաւորութցաւ լուծել ծխական Խորհուրդը եւ ծխական համայնքը, եւ կրկին ծեռնարկել Թորոնթոյի մէջ Թեմական հշխանութեան ենթակայ ծուխ մը վերակազմակերպելու աշխատանքին (1982 Մարտ):

Թեմական հշխանութեան եւ Կանոնադրութեան անհնագանդ եւ համայնքին քայլայման պատճառ Եղողներու պարագլուխ անձերէն կը նկատենք նաեւ ձեզ:

Ուստի, Թեմական Խորհուրդը 1982 Մարտ 18 նիստին մէջ, ակամայ պարտաւորութցաւ եւ միաձայնութեամբ որոշեց հինգ տարիներու պայմանաժամով (մինչեւ 1987 Փետրուար) ձեզ զրկել Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգաց եւ Գանատայի մեր Թեմի համայնքներուն մէջ տրատու անդամ ղառնալու, քուէարկելու եւ ընտրուելու առանձնաշնորհումէն:

Այսու գիրով, Թեմական Խորհուրդի որոշումը կը յայտնենք ձեզի  
ի գիտութիւն եւ ի գործադրութիւն:

Կը յուսանք որ դուք պիտի անդրադառնաք ձեր արարքներու ծանրա-  
կշիռ ընոյթին, եւ ջանադիր պիտի ըլլաք ձեր ընթացքը ուղղելու՝  
ձեր հոգեկան բաւարարութեան եւ Հայց. Եկեղեցւոյ բարգաւաճման հա-  
մար:

Աղօթարար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ